ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 038

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 16-ը ապրիլի 2021 թվականի թիվ 5 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 16.04.2021 թվականի թիվ 5 նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Արենի ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում Սերյոժա Նելսոնի Սիմոնյանի թեկնածությունը հաստատելու մասին

3. Արենի համայնքի ավագանու՝ 18 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 101 և 04 հունիսի 2020 թվականի թիվ 65 որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

4. Արենի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելուն համաձայնություն տալու մասին

5. Արենի համայնքի ավագանու 17.12.2020 թվականի թիվ 139 որոշման թիվ 1 հավելվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

6. Արենի համայնքի Աղավնաձոր և Ելփին բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող հողերի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին

7. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելուն համաձայնություն տալու մասին

8. Արենի համայնքի ավագանու 15.12.2017 թվականի «ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 30-ը նոյեմբերի 2014 թվականի թիվ 26-Ն որոշումը ուժը կորցրած

ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

9. Արենի համայնքի ավագանու 26 հունվարի 2018 թվականի թիվ 9 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

10. Արենի համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին

11. 01.01.2021-31.03.2021 թթ. ընկած ժամանակահատվածում Արենի ՀՈԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին

12. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցույթով վարձակալությամբ հատկացնելուն համաձայնություն տալու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**